



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 մարտի 2024 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդկյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի պաշտոնակատար Արսեն Մկրտչյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պաշտոնակատար Արթուր Պողոսյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/3699/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 6-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. «Բեզլարյան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի մայիսի 13-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 6-ի որոշմամբ գործի

ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 13-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ և 713-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 53-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 69-րդ հոդվածի 2-րդ մասին, 81-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 ու 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՎԴ/11082/05/20 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Ս]ույն գործով վեճի առարկա՝ ՀՀ առողջապահության նախարարության եզրակացության (այսուհետ՝ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20 ենթակետը, ՀՀ առողջապահության նախարարության և «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արբոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» 2020, 2021 և 2022 թվականների պայմանագրերը՝ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով սրեղծված հանձնաժողովը «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում 2023 թվականի նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 7-ը իրականացրել է դիտարկումներ՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում (...) ծրագրերի

շրջանակներում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների, որակի, Արևեղ էլեկտրոնային առողջապահության համակարգ ներկայացված հաշվետվությունների արժանահավաստության վերաբերյալ:

Եզրակացությամբ արձանագրվել է, որ «Բեգլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում դիրարկմամբ արձանագրված խախտումների ընդհանուր գումարը կազմում է 91.180.260 դրամ, որը ենթակա է պետական բյուջե վերականգնման և այն պետք է փոխանցել ՀՀ պետական բյուջե:

Վերոգրյալից հետևում է, որ սույն գործով վեճի առարկա իրավահարաբերությունը չի հանդիսանում հանրային, Եզրակացությունը չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ այն չունի վարչական ակտին բնորոշ վերոնշյալ հատկանիշները, այդ թվում՝ այն չի ընդունվել հանրային իրավահարաբերության բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով: Դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա դիրարկումների համար հիմք են հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածը և ՀՀ առողջապահության նախարարության և «Բեգլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերը, իսկ իրականացված դիրարկումների արդյունքում կազմվել է Եզրակացությունը:

Այսինքն՝ րվյալ դեպքում վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա անդրադառնալով հայցվորի պահանջին՝ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարարության 22.11.2022 թվականի թիվ 5396-Ա հրամանով սրեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի վերաբերյալ վեճը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ չէ, հետևաբար, ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության¹:

6. Հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին և 26-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի

¹ Տե՛ս դատական գործը, թերթեր 145-153:

մարտի 6-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ «(...) [Ս]ույն գործը ենթակա չէ քննության ընդհանուր իրավասության դատարանում, այլ ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հերկությունն այն մասին, որ թիվ ՎԳ/3699/05/23 գործն ըստ «Բեգարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի հայցի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով սրեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնագիտացված դատարաններն են՝

1) վարչական դատարանը. (...):»

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի

² Տե՛ս դատական գործը, թերթեր 172-175:

Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դադարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դադարանի (...) կամ Սահմանադրական դադարանի իրավասությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դադարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դադարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դադարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դադարանի նախագահը և Վճռաբեկ դադարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դադարանում սրանալու պահից փաստօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դադարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դադարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դադարանը համարվում է իրավասու դադարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն

պարճատարանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Առաջին ասրանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ փյալ հայցադիմումի պահանջն ընդդարյա չէ իրեն, այն պարճատարանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարյության»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճոաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել «Վեար» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. «(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից փարանջարվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ փարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հարկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժրված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնարար անձիք, այդ թվում՝ պերական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժրված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛

բովանդակությունը և ի հայր է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...):»³:

9.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոհիսիմե Իշիկյանի քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. «[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդարյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Վետր» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդարձության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (...)»⁴:

9.2. Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:*

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշտպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադատության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադատության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոհիսիմե Իշիկյանի քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԳ/1029/02/14 որոշումը:

ընդհանուր: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- որ նորմերն են լուծում վեճը,
- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),
- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»⁵:

9.3. ՀՀ Վճռաբեկ դատարանը, «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արթեն Դուլյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի վարչական գործով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ անդրադառնալով վարչական ակտի հատկանիշներին, արձանագրել է հետևյալը. «(...) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կարարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հարակորեն որոշված հասցեատեր,

⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 որոշումը:

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի յուրօրում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ սրեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վարթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը»⁶:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արբեն Դուլյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի վարչական գործով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՎԴ/11082/05/20 որոշումը:

10. Սույն որոշման 8-9.3-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել բոլոր այն գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Այսինքն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Կասպալի պայմանագրով մի կողմը (կասպալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պարտվիրարուի) առաջադրանքով կարարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պարտվիրարուին, իսկ պարտվիրարուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձարել դրա համար:*

2. Կասպալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

3. Կասպալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կասպալ, շինարարական կասպալ, նախագծային և հետազոտական աշխատանքների կասպալ, պետական կարիքների համար կասպալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են սույն պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքի՝ կասպալի պայմանագրի համապարասիսան տեսակների մասին կանոններով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Պարտվիրարուն իրավունք ունի ցանկացած ժամանակ սրուգել կասպալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամրելու վերջինիս գործունեությանը:*

2. Եթե կասպալառուն ժամանակին չի սկսում կասպալի պայմանագրի կարարումը կամ աշխատանքը կարարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պարտվիրարուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կարարելուց և պահանջել հարուցելու վնասները:

3. Եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պարզաճ չի կատարվելու, պարվիրատուն իրավունք ունի ողջամիտ ժամկետ նշանակել կապալառուի կողմից թերությունները վերացնելու համար, և այդ ժամկետում կապալառուի կողմից թերությունները չվերացվելու դեպքում հրաժարվել կապալի պայմանագրից կամ կապալառուի հաշվին աշխատանքի թերությունների վերացնելը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները»:

12. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ «Նախարարը՝ (...) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր»:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- սույն գործով ՀՀ առողջապահության նախարարության և «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև իրավահարաբերության ծագման համար հիմք են հանդիսացել «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» 2020, 2021 և 2022 թվականների պայմանագրերը,

- ՀՀ առողջապահության նախարարության և «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև 2022 թվականի հունվարի 24-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ կատարողի կողմից նույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը նույն պայմանագրի շրջանակներում իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

- ՀՀ առողջապահության նախարարը, ««Բեզլարյան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում դիտարկումներ իրականացնելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ՀՀ առողջապահության նախարարության և «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» 2020, 2021 և 2022 թվականի պայմանագրերը, բնակչությանը ցուցաբերվող բուժօգնության տրամադրման շրջանակներում կատարած աշխատանքները դիտարկելու նպատակով հրամայել է իրականացնել դիտարկումներ «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարի հրամանների պահանջների պահպանման, ծրագրերի շրջանակներում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների, որակի, Արմեդ էլեկտրոնային առողջապահության համակարգ ներկայացված հաշվետվությունների արժանահավաստության վերաբերյալ: Նույն հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որն իրականացված դիտարկումների արդյունքում կազմել է եզրակացություն:

- «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 2023 թվականի մայիսի 13-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին⁷:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ

⁷ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ատողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու մասին պահանջ: Հատկանշական է, որ թեև տվյալ իրավահարաբերության կողմերից մեկը ՀՀ ատողջապահության նախարարությունն է, սակայն իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Մասնավորապես, սույն գործով կողմերի միջև առաջացած իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չէ հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), քանի որ ՀՀ ատողջապահության նախարարությունը հանդես գալով որպես քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ (Պատվիրատու), դիտարկումների միջոցով իրականացրել է կատարողի կողմից մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատում: Հետևաբար, ՀՀ ատողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությամբ կարգավորվել են կողմերի միջև առկա մասնավոր-իրավական հարաբերություններ, որպիսի պայմաններում սույն վեճը կրում է մասնավոր-իրավական բնույթ:

15. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3699/05/23 գործն ըստ «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի հայցի ընդդեմ ՀՀ ատողջապահության նախարարության՝ ՀՀ ատողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Վերը շարադրվածի հաշվառմամբ գտնում ենք, որ «Բեզլարյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3699/05/23 գործը

ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԳ/3699/05/23 գործն ըստ «Բեգլարյան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 5396-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ
ԲԵԴԵՎՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐՄԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ
ԴԱՎԹՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐԹՈՒՐ
ՊՈՂՈՍՅԱՆ**